ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով)՝

մասնակցությամբ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Նելլի Հարությունյանի, անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Ռոման Ահարոնյանի Արթուր Դավթյանի, Արմեն Ֆերոյանի,

նկատի ունենալով հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար անցկացված մրցույթի գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով գրավոր փուլի արդյունքներն ըստ ծածկագրերի գնահատված լինելու հանգամանքը, ինչպես նաև ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքների՝ կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 3.6-րդ կետով, 3.11-րդ կետի 4-րդ ենթակետով, 4.7 կետով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Գնահատել քրեական ուղղվածության դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Տեղադրել սույն որոշման հավելվածը Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի ցուցատախտակի վրա:

11 դեկտեմբերի 2017թ.
թիվ 3/1-Ա

3. 2017 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը՝ 16:30-ին Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ) բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքները:
4. Սույն որոշման 3-րդ կետի մասին տեղեկացնել հավակնորդներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Նելլի Հարությունյան

Մրցութային հանձնաժողովի անդամներ՝ Մելանյա Առուստամյան

Ռոման Ահարոնյան

Արթուր Դավթյան

Արմեն Ֆերոյան

11 դեկտեմբերի 2017թ.
թիվ 3/1-Ա
ք. Երևան